ԾԱՌԱ-ԱՂԱԽԻՆ-ՍՏՐՈՒԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պրոֆ. Ս. Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

Հին Հայաստանի ծառա-աղախին-ստրուկների ինստիտուտը վաղուց է գրավել գիտնականների ուշադրությունը, այդ հարցին նվիրված են առանձին ուսումնասիրություններ[1]։ Ինչ վերաբերում է ծառա-աղախինների սոցիալ-տնտեսական վիճակին և ստրկական աշխատանքի օգտագործմանը միջին դարերում, ապա այդ հարցը միայն շոշափվել է որոշ աշխատություններում[2] և դեռևս կարոտ է հանգամանալից քննության։ Ներկա հոդվածում բարձրացնում ենք միայն երկու հարց՝ ա) ծառա-աղախին-ստրուկների առաջացման աղբյուրները և բ) նրանց սոցիալ-տնտեսական դրությունը, իրավունքներն ու պարտավորությունները միջնադարյան Հայաստանում։

1. Ծառա-աղախին-ստրուկների առաջացման աղբյուրները։ Ինչպես ստրկատիրական հասարակության, այնպես էլ վաղ և զարգացած ֆեոդալիզմի պատմաշրջանում ծառա-աղախին-սպասավոր-ստրուկների առաջացման գլխավոր աղբյուրը պատերազմն ու գերեվարությունն է եղել։ Ֆեոդալիզմի դարաշրջանում պատերազմների միջոցով ձեռք բերված ռազմագերիների զգալի մասը մասնահատվել է աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների, վանքերի ու եկեղեցիների, թագավորների և զորապետների միջև՝ որպես ծառա-աղախին-ստրուկներ։ Պատերազմների և ռազմական արշավանքների միջոցով ռազմագերիների ձեռք բերման այս եղանակն այնքան բնական է համարվել, որ իր օրինական

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, *Հ. Մանանդյան Ֆեոդալիզմը հին Հայաստանում Երևան, 1934, էջ 45, 87–89, 153, 156, 233–234, Ա. Սամուելյան, Սարկություններ հին Հայաստանում (տես ՀՍՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք 2), Նույնի՝ Հին հայ իրավունքի պատմություն, հատ. I, Երևան, 1939, էջ 272–325,* С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении *(տե՛ս* ВДИ, 1, 1950), *Նույնի՝* Опыт периодизации истории Армении эпохи феодализма *(տես* „Вопросы истории", 1951). *Ս. Ե. Հակոբյան, Սարկություն և ստրկատիրական հասարակական ֆորմացիան հին Հայաստանում (տե՛ս ԳՍ «Տեղեկագիր», 1948, № 8), Նույնի՝ Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1, 1957, էջ 210–257։*

Ս. Իսահակյան, Հողային և անձնական իրավունքը հին Հայաստանում (տե՛ս «Մուրճ», 1894, № 1, էջ 90–91, № 4, էջ 251–252, հմմտ. Նույնի՝ Личныя и поземельныя права в древней Грузии, *1895, Ա. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. I, Երևան, 1939, էջ 276–277, 279, 281, 293–294, Ի. Ասատրյան, Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիալական կազմը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 58–61) և ուրիշներ։*

ձևակերպումն է գտել համապատասխան կանոնագրքերում ու դատաստանագրքերում։

Ինչպես ամբողջ ավարից, այնպես էլ ռազմագերի-ստրուկներից տաճարներին արվող բաժինը հույժ նշանի է եղել միևնույն «հաս» տնվան տակ։ Հին կտակարանի հայերեն թարգմանության մեջ պահպանվել են մի շարք ուշագրավ հատվածներ այդ մասին։ Այսպես, օրինակ, այնտեղ ասված է. «Եւ առջիք հաս Տեառն յամենայն արանց պատերազմողաց յերթելոց, ի պատերազմ ոգի մի ի հինգ հարիւրոց՝ ի մարդոյ և յանասնոյ, և յարջառոյ և ոչխարէ և յայծեաց», կամ՝ «Եւ եղեւ կէս աւարին երթելոցն ի պատերազմ ի թուոյ ոչխարացն երեք հարիւր եւ երեսուն հազար եւ եօթն հազար եւ հինգհարիւր։ Եւ եղեւ հասն Տեառն յոչխարէ՝ վեց հարիւր եւ եօթանասուն և հինգ։ Եւ արջառն երեսուն եւ վեց հազար, եւ հասն Տեառն՝ եօթանասուն եւ երկու։ Եւ էշք՝ երեսուն հազար եւ հինգ հարիւր, եւ հասն Տեառն վաթսուն եւ մի։ Եւ ոգիք մարդկան՝ վեշտասան հազար, և հաս ի ճոցանէ, Տեառն՝ երեսուն եւ երկու ոգիք»[3]։

Մեր հին և միջնադարյան մատենագիրները պահպանել են ուշագրավ վկայություններ պատերազմական գերեվարությունից ծառա-ագախին-ստրուկների առաջացման մասին։ Մ. Խորենացին Հայկի նահապետական տոհմում հիշատակում է «օտարածին» կամ «ընդոծին» և ռազմագերի-ստրուկների առկայությունը։ Պատմահայրը խոսելով Տիգրան Ե-ի մասին ասում է, որ երբ նա արշավեց Պաղեստին, Ասորիք, գերեց այս երկրների բնակիչներին և կարգադրեց «նստուցանել զգերին Հրէից... ի քաղաքն Ճամիրամայ...»[4]։

Փ. Բուզանդը, խոսելով հայ-ադվանա-բյուզանդական հարաբերությունների մասին, վկայում է, որ Ադվանից աշխարհի Ուռնայր թագավորը դիմելով իր զորքերին ասում է. «Յանձն լիցի ձեզ, յիշելով ի ժամանակի՝ իրեն ձերբակալ արասցուք զզօրսն Յունաց, զրաղումս ի նոցանէն ապրեցուսջիք. զի կալեալս կապէալս տարցուք յադՓանս (ձեռագիր օրինակում «յԱդուանս»—Ս. Հ.) ի գործ կաւազործութեան դաղատոս որմաշէնս պիտոյից մերոց քաղաքաց ապարանից եւ այլոց պիտոյից»[5]։

Հայ թագավորները, նախարարները, զորապետները գերում էին ոչ միայն օտարներին, այլև համազգայիններին։ Պապ թագավորի կարգադրությամբ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը, ինչպես վկայում է նույն պատմիչը, սկսում է հետապնդել այն հայ նախարարներին, որոնք «ապստամբ եղեն ի թագաւորութենէն Արշակունեաց»։ Սպարապետն արշավում ու ասպատակում է ապըստամբ նախարարների երկրները, «ասնոյր գերէր բաղում գերութիւն ի նոցանէ. եւ զմնացորդսն նուաճեր եւ ի հարկի ծառայութեան կացուցանէր»[6]։

Եղիշեն անարգանքի սյունին դամելով հայ ժողովրդի քաղաքական շահերի դավաճան Վասակ Սյունեցուն, նրան մեղադրում է նաև այն բանում, որ նա «սուտ երդմամբ, խաբէր և իջուցանէր» անառիկ ամրոցներից հայ ասպս-

---

3 «Գիրք Աստուածաշունչք մատեան հին և նոր կտակարանաց», Վենետիկ, 1860, թիւր ԼԱ 28, 36—41 (այսուհետև բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.).

4 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 32, 33։

5 Նույն տեղում, էջ 134—135։ Ապիանոսը Տիգրան Բ-ի կողմից ձեռք բերված գերիների թիվը հաշվում է 300000, տե՛ս Appianos, Mithrid, էջ 67։

6 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 162։

7 Նույն տեղում, էջ 175—179։

տամբներին, նրանց մի մասին սրի էր քաշում, իսկ մյուսներին «Երեի տանէր զծառայս և զաղախնայս արՐունի»[8]։

Ռազմագերի ծառա-աղախին ստրուկների ձեռք բերման և բաշխման այս եղանակն անցնում է նաև հետագա դարերին։ VII դ. նշանավոր գիտնական և մատենագիր Անանիա Ցիրակացին վկայում է, որ երբ Ներսեհ Կտմսարականը հաղթական կերպով վերադառնում է պատերազմից, իր հետ բերում է «գերի սաստիկ յոյժ»։ Նա ռազմագերիներին բաշխում է պարսից թագավորին, թագաժառանգին, իր Հրահատ և Սահակ եղբայրներին և էջմիածնի եկեղեցիներին։

Ներսեհը պարսից թագավորին տալիս է «զհասարակ գերւոյն» կեսը, թագաժառանգին՝ «զեաւթներորդ մասն», ոմն Դարիկպետի՝ «զութներորդ մասն գերւոյն», սպարապետին՝ «զչորեքտասաներորդ մասն գերւոյն», իր կրտսեր եղբայր Հրահատին՝ «զվերեքտասաներորդ մասն գերւոյն», էջմիածնի եկեղեցիներին՝ «զվեշտասաներորդ մասն գերւոյն», հայ ազատներին՝ «զիններորդ մասն», իր Սահակ եղբորը՝ «զքսաներորդ մասն գերւոյն», իրեն թողնում է՝ «հինգ հարեւր և եաթանասուն անձն...»[9]։

Հովհ. Դրասխանակերտցին, Մատթեոս Ուռհայեցին, Վարդան Բարձրբերդցին, Մ. Դոշը և ուրիշներ թողել են է՛լ ավելի ուշագրավ վկայություններ պատերազմների միջոցով ռազմագերի-ստրուկներ ձեռք բերելու կարգի մասին։ Հայաստանից անչափ գերի-ստրուկներ են տանում արաբները, սելջուկ-թուրքերը և օտար այլ բռնադատիչներ։

Սեբեոսը, Հովհ. Դրասխանակերտցին և Վ. Բարձրբերդցին վկայում են, որ երբ արաբները գրավեցին ու ասպատակեցին Հայաստանը, միայն Դվին քաղաքից տարան շուրջ 35 000 գերիներ։ «Երեսուն և հինգ հազար ոգի գերեցին վաճառակուր լինել, և անցեալ գնացին՝ ընդ որ չուեալ երկիրն յԱսորեստան»[10]։ Սելջուկ-թուրքերը, վկայում է Մ. Ուռհայեցին, ասպատակելով «հրոչակաւոր և բազմամրոխ քաղաքն հայոց՝ որ կոչի Արծն», գերում և «զի գերութիւն յաշխարհն պարսից յանդին ծառայութիւն» տանում են մեծ թվով գերիներ[11]։

Պատերազմների, ռազմական արշավանքների ճանապարհով ռազմագերի-ծառա-ստրուկների ձեռք բերման այս եղանակն այնքան տարածված է եղել միջնադարյան Հայաստանում, որ Մ. Դոշը ստիպված այդ առթիվ սահմանել է հատուկ կանոններ։

Եթե թագավորն,— ասում է Դոշը,—անձամբ մասնակցում է ռազմական արշավանքին, ստանում է ռազմագերիների և ավարի կեսը, իսկ եթե ոչ՝ $^1/_{10}$-մասը։

«Բայց ասելի է,—սահմանել է մեր օրենսդիրը,— զօրինակ բաժանման գերւոյն եւ աւարին։ Եթէ պատահիցի երթալ յաւար թագաւորի ամենայն զօրաքրոշիւք և փոդովք յաշխարհ թշնամեաց և աւար առեալ դարձցի... գերւոյն և աւարին կէսն թագաւորի լիցի և տասանորդ իցէ յեկեղեցիս. և ի կիսոյն— զօրացն»։ Բայց եթե թագավորն անձամբ պատերազմին չի մասնակցում

8 Եղիշե, «Պատմութիւն Վարդանանց», Թիֆլիս, 1913, էջ 173։

9 Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Ա. Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 230։

10 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 82, 247։ Հմմտ. «Պատմութիւն Սեբէոսի Եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, էջ 176, «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 53։

11 «Մատթէոսի Ուռհայեցւոյ ժամանակագրութիւնն», Վաղարշապատ, 1898, էջ 103—104, 134, 141, 217 և հա։

ստանում է «ի զերուոյն և յաւարէն տասանորդն...»։ Ավարի և ռազմագերիների բաշխման և մասնահատման այս կարգը, ասում է Գոշը, պետք է տարածել նաև իշխանների վրա։ Առանձին իշխաններն էլ պետք է ռազմավարն ու գերիներին բաշխեն նույն կարգով։ «Իւրաքանչիւր իշխանքն զնոյն բաժին արասցեն, և նորա եւս նախ տասանորդեսցին յեկեղեցիս իւրաքանչիւր»[12]։

Ծառա, աղախին-ստրուկի առաջացման ոչ պակաս կարևոր աղբյուրներից մեկն էլ, այսպես կոչված, ծառա, աղախին-ստրուկների «պտուղն» էր։ Պատմական սկզբնաղբյուրների վկայություններից ակնհայտ է դառնում, որ անազատ քաղաքացիներից, ծառա, աղախին-ստրուկներից և նույնիսկ սրանցից և ազատ քաղաքացիներից ծնված երեխաներն անցնում են տերերին, որպես նրանց ծառաները։

Ասորա-հռոմեական, Սմբատ Գունդստաբլի և Մ. Գոշի դատաստանագրքերում այդ մասին սահմանված են մի շարք ուշագրավ կանոններ։

«Եթե ծառայ ազատի և մնայ ընդ իշխանութեամբ տեառն իւրոյ անձնիշխան,— սահմանված է Ասորա-հռոմեական Դատաստանագրքի Լէ կանոնում,— և առնու կին յաղախնեաց տեառն զկնի ազատութեանն, և ի ծնանին ի նմանէ, որդիս, ոչ ժառանգին զնա որդիք ազատիւնոյն, այլ ժառանգ լիցի նմա, որ ազատեացն զնա»[13]։

Սմբատ Գունդստաբլն իր «Վասն ծառայից եւ որ չկարէ ոք զծառայն ժառանգ դնել» (ՃԽԶ) կանոնում անդրադառնալով այս նույն հարցին գրել է, որ «Եթե որևէ անձնավորություն խիստ կարիքից դրդված կնոջով և որդիներով ծառայագրվել է տիրոջ մոտ, ապա ծառայության սահմանված ժամկետը լրանալուց հետո ծառային իրավունք է վերապահվում «կնկով ելնէ (ծառայությունից—Ս. Հ.) եւ որդովք. եւ թէ ինքն՝ մէն»։ Բայց եթե ծառայագրված ծառան չկարողանալ լինայ զինք գնաւղն, ու որդիք էլ ուննայ նա այն գնաւղինն էր»[14]։

Տիրոջ լիակատար սեփականատիրական իրավունքը ծառաների, նրանց ընտանիքի անդամների նկատմամբ իր արտահայտությունն է գտել նաև Մ. Գոշի Դատաստանագրքում։ Եթե քրիստոնյա տերը կնում է քրիստոնյա ծառա, սահմանել է Գոշը, ապա նա պարտավոր է ծառային ազատել ծառայությունից «վեց ամ» կամ «ըստ գնոյ իւր» ծառայելուց հետո։ Եթե ծառան ինքը մենակ է մտել ծառայության մեջ, ապա «միայն ելցէ, և եթէ կնաւ հանդերձ մտեալ իցէ—ելցէ եւ կինն ընդ նմա»։ Սակայն եթե տերը «տացէ նմա կին եւ ծնանիցի նմա որդիս և դստերս, կինն եւ որդիքն տեառնն նորա եղիցին, եւ նա միայն ելցէ»[15]։

Ծառայության սահմանված 6 տարի ժամկետը լրանալուց կամ «ըստ գնոյ իւր» ծառայելուց հետո ազատագրված ծառան զրկվելով ընտանիքից և չկարողանալով փրկավճարով ետ դնել կնոջը, երեխաներին, հաճախ հարկադրված էր լինում կրկին մնալ ծառայության մեջ։

«Ապա թէ,— ամփոփում է օրենսդիրը,— պատասխանի տուեալ ասիցէ ծառայն—սիրեցի զտէր իմ եւ զկին իմ եւ զորդիս իմ եւ ոչ գնասցէ յազատու-

12 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 311—312։

13 Ասորական Դատաստանագիրք, ձեռագրերի համեմատությամբ լույս ընծայեց Ա. Ղլտճյան, Էջմիածին, 1917, էջ 17։

14 Смбат Спарапет, Судебник, Ереван, 1958, էջ 132։

15 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 335։

թիւն, տարցի զնա տէր իւր յեկեղեցի Աստուծոյ եւ քահանայիւք եւ հաւատարիմ վկայիւք և գրով առցէ զնա (անկասկած ընտանիքի հետ միասին—Ս. Հ.) ծառայ յաւիտեան»[16]։

Ծառա-ստրկության ոչ պակաս կարևոր աղբյուրներից էր նաև արտաղրամիջոցները, հողակտորները կորցրած խիստ կարիքավոր կամ անվճարունակ պարտատերերի զրության մեջ ընկած մարդկանց և սրանց որդիների առքն ու վաճառքը։ Այս երևույթն այնքան տարածված էր հին Արևելքում, հին և միջնադարյան Հայաստանում, որ սկզբնաղբյուրներում այն դատապարտվում է որպես հասարակական չարիք։

«Եթէ,— ասված է Հին Կտակարանի հատվածներից մեկում,—տնանկեսցի ղեղբայր քո առ քեզ, եւ վաճառեսցի Ընդ. մի ծառայեսցի քեզ զծառայութիւն ստրկի իբրեւ զվարձկան...։ Մի վաճառեսցի ի վաճառս ստրկի՝ եւ մի տառապեցուսցիս զնա ընդ աշխատութեամբ»[17]։

Գնման եղանակով ծառա, սպասավոր-ստրուկներ ձեռք բերելու դեպքերն այնքան մասսայական էին դարձել, որ նույնիսկ Յայսմավուրքը խրատական կանոններով արգելում է տերերին այդ եղանակով ազատ մարդկանց ծառաղախին դարձնել. «Գնոց ասէ զնացեալք մի լինիք ծառայք մարդկան»[18]։

Շահապիվանի հայտնի ժողովում, Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյանի կողմից մշակված կանոններում իրավունք է վերապահված ոչ միայն ձեռք բերել «արծաթագին» ծառա-աղախիններ, այլև վաճառել «հանցապարտ» կանանց, պարտքերը ժամանակին չմարող ազատ քաղաքացիներին։ «Եթէ,—սահմանված է Շահապիվանի ժողովի Զ կանոնում,—որ կին յառնէ եւ անիցէ, կալցեն և անդրէն յայր իւր տացեն...»։ Եթե ամուսինն ապացուցեց, որ կինը իրեն լքել է անբարոյականության պատճառով, ապա նա իրավունք ունի կնոջը կամ «յաղախնութիւն կալցի» կամ թե «վաճառեսցի»[19]։ Ներսես կաթողիկոսը և Ներշապուհ Մամիկոնյանը խիստ կերպով արգելում են հոգևորականներին ձեռք բերել «արծաթագին» աղախիններ. «...Մի արծաթագին աղախնաւս ոտանալ եւ կամ ի կապենաց պոռնկաց ի տունս տանել զգարշելիսն, զոր ոչ հրամայեն օրէնք»[20]։ Նրանք դատապարտում են նաև այն առևտրական-վաշխառուներին, որոնք իրենց դահեկանները տալիս են բարձր տոկոսներով և ժամանակին պարտքը չմարող քաղաքացուն վաճառում են «որպէս ծառայս...»[21]։

Հովհան Մանդակունու «Վասն փոխոց և վաշխից» ճառում պահպանվել է հետևյալ ուշագրավ վկայությունը. «Զուարթերես» կեղծավոր փոխատուն,— ասում է հեղինակը,—«տեսանելով զչքաւորութիւն և զտարակուսութիւն պարտապանին՝ ոչ ողորմի, եւ ոչ երդմանն հաւատայ մաղթողին, ոչ խոնարհի յառաջանս վարանեցելոյն, այլ զժոխեալ անխոնարհելի եւ անհաշտ, եւ իւր ծառայ զփոխառուն համարի փոխատուն»[22]։

16 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 335—336։
17 Վեհ, Իե, 34։
18 Յայսմավուրք, կ. Պոլիս, 1834, հատ. II, էջ 143։
19 Կանոնգիրք Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 65։
20 Նույն տեղում, էջ 115։
21 Նույն տեղում, էջ 108։
22 «Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի, Ճառք», Վենետիկ, 1869, էջ 65—66։

Այս հատվածից ակնհայտ է, որ իրեն ծառայության և ստրկության է հանձնում երբեմնի ազատ այն մարդը, որ չի կարողանում վճարել ստացած «փոխն»։ Վաղ ֆեոդալիզմի շրջանից եկած այս սովորույթն անխախտ կերպով անցնում է նաև միջին դարերին։

«Եթէ ղնէ մարդ դեաւղ կամ ծառայ կամ այլ ինչ յանուն...,—սահմանված է Ասորա-հռոմեական Դատաստանագրքի ԺԴ և ՃԸ կանոններում,—...ունի ի վերայ նորին իշխանութիւն»[23]։

Մ. Ուռհայեցին խոսելով 1032 թ. սաստիկ սովի մասին գրել է, որ «...բաղումք ի մարդկանէ մեռանէին յերեսաց սովոյն և բաղումք վաճառէին զկանայս և զորդիս իւրեանց յաղագս կարօտութեանց հացի»[24]։

Մ. Գոշը իր Դատաստանագրքում սահմանել է հատուկ կանոն կարիքավոր մարդկանց ստրկության վաճառվելու կարգի մասին։ «...Իսկ եթէ պատահի,— գրել է օրենսդիրը,— ումեք վանառել զդուստր իւր ըստ որում եւ իցէ պատճառի յաղախնութիւն...», ապա աղախին գնած տերն իրավունք չունի նրան վաճառել օտարազգի մարդկանց. նա կարող է նրան վաճառել միայն քրիստոնյաներին կամ ազատ արձակել «չափով գնոյ իւրոյ» կամ 6 տարի ծառայելուց հետո միայն[25]։

Այս կանոնը Գոշից անցել է Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքին։ Սմբատն իր այդ կանոնը վերնագրել է «Վասն որ զիր դուստրն ծախէ վասն ազքատութեան»։

«Եթէ,— սահմանված է Դատաստանագրքի ՃԽԷ կանոնում,—ոք զիր դուստրն վասն աղքատութեան ծախէ քրիստոնէի՝ նա կարէ զէդ ծառա մի ունել զինք. բայց չկարէ յանաւրէնքի ծախել. եւ յորժամ կարենան ծնաւղքն կամ ազգն վճարել զսլարտքն՝ նա ազատ է»։ Սակայն եթե ծնողները կամ հարազատները չեն կարողանում ժամանակին վճարել փրկավճարը, ապա գնողին իրավունք է վերապահվում աղախնուն «ճորտոյ տալ» կամ թե ստիպել, որ նա ծառայի 6 տարի, որպեսզի իր «դինն հանէ»[26]։

«Աղախնութեան», «սպասաւորութեան», «ծառայութեան» կարող էին վաճառել նաև այն կանանց, որոնք անբարոյական էին կամ լքում էին իրենց ամուսիններին։ «Կին որ առանց եկեղեցւոյ և առանց հրամանաց և մեծ պատճառանաց... թողու զայրն ու փախչի՝ նա իրաւունք է, որ բռնէն զինք և ի յիր այրիկն տան, որ յաւիտեան ծառայ ուննայ զինքն...»։ Բայց եթե ապացուցված է, որ կինն ամուսնուն լքել է անբարոյականության պատճառով, ապա ամուսինը ոչ միայն իրավունք ունի նրան դարձնել իր «յաւիտեան» ծառան, այլև վաճառել։ «Ապա հրամայված է յաւրէնքս, որ ծախել այլ կարէ զինքն այրիկն»[27]։

Օրենսդիրներն իրավունք են վերապահում «ծառայութեան», «սպասաւորութեան», «աղախնութեան» վաճառել «խռովարար», «խռովասեր» մարդկանց, սրանց որդիներին, «հանցապարտներին», «գողերին», «ավազակներին», «մարդասպաններին», «այլազգիներին» և այլն[28]։

---

23 «Ասորա-հռոմեական Դատաստանագիրք», էջ 19, 44։

24 «Մ. Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն», էջ 64։

25 Մ. Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 336։

26 С м б а т С п а р а п е т, Судебник, էջ 133։

27 Նույն տեղում, էջ 105։

28 Մ. Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 311, 337։

Սմբատ Գունդստաբլը սահմանելով հայ թագավորների իրավունքներն ու պարտականությունները, նրանց իրավունք է վերապահել ասպատակել կենտրոնախույս միտումներ ունեցող հայ մեծամեծ իշխանների, աղնվականների ամրոց-բերդերը, իսկ բնակչությանը գերել և վաճառել։ «Զբերդտուքն և զայնպիսիքն անհնար պիտի սպաննել և զկինն և զորդիսն ծառայ տայ ի դարպասն և կարէ ծախել...»[29]։

Ծառա-աղախինների առաջացման մասին մի շարք ուշագրավ վկայություններ թողել է Գր. Տաթևացին։ Նրա կարծիքով «Ի բազումս բաժանին աղքատաց դասք»։ Ինչպես որ հոգևոր հիերարխիան բաժանված է «եօթն դասի», այնպես էլ աղքատների «դասքն» ստորաբաժանված է «եօթն» մասի։ Նախ ծառա-աղախին են դառնում բոլոր նրանք, ովքեր «ի բնէ ծնողաց կարօտն են ընչից և պակաս և տնանկ», ովքեր «ի մեծ տանէ անկեալ» են և «չբաւորեալ», «որբ են և այրեր», ովքեր «բանդեալ» են գերի և «ստրուկ, որք կարօտ են յազատութեան»։

Ծառա և աղախին են դառնում նաև նրանք, ովքեր «կարօտ են յարկի և հայրենեաց»։ Բացի այս ծառա-աղախիններից կան նաև այնպիսի մարդիկ, որոնք ոչ «գերեալ» են «սրով .. ոչ գնեալ և ոչ վարձեալ, այլ միշտ ծառայ» են։

«Այս եօթն տեսակք են աղքատաց և սորայ են ողորմելիք...» եզրափակում է Տաթևացին[30]։

Արդ, ընդունելով ծառա-աղախին-ստրուկների առկայությունն ու լայն տարածումը զարգացած ֆեոդալական արտադրահարաբերությունների շրջանը թևակոխած Հայաստանում, բնականաբար հարց է առաջանում՝ ի՞նչ իրավունքներ ու պարտավորություններ ունեին նրանք, ինչպիսի՞ դեր էին խաղում ժողովրդական տնտեսության մեջ։ Նախօրոք պետք է նշենք, որ վաղ ֆեոդալիզմի շրջանից հայտնի «ի ստրկաց կարգի ծառայութիւն», «ծառայութիւն ստրկութեան» տերմինները չքանում են միջնադարյան սկզբնաղբյուրների էջերից։ Սրանց փոխարինելու են գալիս «աղախնութիւն», «ծառայութիւն», «սպասաւորութիւն» բառերը։ Եթե նախորդ, վաղ ֆեոդալիզմի շրջանում «ի ստրկաց կարգի ծառայութիւնն» կամ «ծառայութիւն ստրկութեան» բառերն արտահայտում էին արևելյան, ընտանեկան, նահապետական, ստրկատիրական հարաբերություններ, ապա միջնադարյան Հայաստանում ծառա-ստրուկների աշխատանքն աստիճանաբար կորցնում է իր նախավանդ նշանակությունը և «ի ստրկաց կարգի» կամ «ծառայութիւն ստրկութեան» բառերի փոխարեն գործածական են դառնում «աղախնութիւն», «սպասավորութիւն» և ընդհանրապես «ծառայութիւն» տերմինները։

2. Ծառա-աղախինների իրավունքներն ու պարտավորությունները։ Միջնադարյան ծառա-աղախիններն իրենց բաղաքացիական իրավունքներով զրկված էին հին դարերի ստրուկներին գրեթե հավասար պայմաններում։ Ինչպես հին շրջանում, այնպես էլ միջնադարում ծառա-աղախինները ծառայության պարտադիր ժամկետը լրանալուց առաջ առանց տերերի համաձայնության չէին կարող ազատագրվել ծառայությունից, վարել պետական կամ հոգևոր պաշտոններ, ամուսնանալ, հանդես գալ դատարաններում։ Ավելին, տերերի սե-

[29] Смбат Спарапет, Судебник, էջ 10։

[30] Գր. Տաթևացի, Գիրք քարոզչութեան որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 359—360։

փականատիրական իրավունքը տարածվում էր ոչ միայն ծառա-աղախինների, այլև նրանց ընտանիքի անդամների վրա։ Տերերին իրավունք էր վերապահված ոչ միայն պատժել, խոշտանգել և սպանել «գող», «հանցապարտ», «խռովարար», «խռովասէր» ծառաներին, այլև բռնագրավել նրանց կայքը, գույքը, տունը։ Զանազան եղանակներով ձեռք բերված ծառա-աղախիններին տերերը կարող էին վաճառել, նվիրել, կտակել, ետ գնել և այլն։

Միջնադարյան մատենագիրները հայ ֆեոդալական հասարակության ամենաստորադաս աստիճանին են դնում «անազգիք», «զանրան կենդանիների» վիճակի մեջ ընկած ծառա-ստրուկներին։

Ծառա-աղախինները, հարում են մեր մատենագիրները, դատաստանագրքերի հեղինակները, ոչ միայն իրենց աշխատանքով, այլև «ընութեամբ», «ծագումով», «ծառայք են մարդկան»։ Ն. Շնորհալին ամեն կերպ ջանում է կարգավորել «հաւետք» ծառաների ու տերերի փոխհարաբերությունը, որոշել ծառաների պարտավորություններն ու իրավունքները։ Դիմելով աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին Շնորհալին պատվիրում է. «Մի որպէս զանրան կենդանիս՝ որ ընութեամբ ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ՝ որ ընդ իշխանութեամբ ձերով լինին՝ ի գործ խիստ և աններելի... և զայն՝ առանց կերակուր տալոյ նոցին, այլ ներելով և քաղցրութեամբ և սակաւօրեայ ժամանակաւ, և առատագոյն կերակրօք լցուցանել զնոսա յաշխատութիւն անդր... որպես զի կարող լինիցին վաստակօք իւրեանց զաղքատանաց կեանս զտանց և զորդւոց իւրեանց լցուցանել...»[31]։ Շնորհալին ասում է, որ ծառաները, հպատակները տրտնջում են ոչ այնքան «ծանր և դժվարակիր» աշխատանքներից, որքան տերերի կամայականություններից, «չար և անիրաւ» գործակալների ու դավառապետների շահատակություններից։ «Մի անիրաւարար վարիք առ հնազանդեալսդ ծանր եւ դժուարակիր հարկադրութեամբ, զոր ոչ կարեն բառնալ, այլ օրինօք դատեցէք... մի անհնազանդ լինիք օրինացն...», որովհետև առանց այդ էլ «ծառայք զկամս հրամանի ձերոյ հնազանդութեամբ եւ անթերի կատարեսցեն...»[32]։

Դատափետելով չար, նենգամիտ, ագահ, ոճրագործ տերերին, Շնորհալին միաժամանակ պատվիրում է ծառաներին հնազանդ ու անթերի ծառայել ոչ միայն քրիստոնյա, այլև «կռապաշտ» տերերին[33]։

Ասորա-հռոմեական, Դավիթ Ալավկա որդու, Մ. Գոշի, Ս. Գունդստարլի դատաստանագրքերում, մատենագրական երկերում և ձեռագիր աղբյուրներում պահպանվել են մի շարք կանոններ, դրույթներ, փաստեր, որոնք նույնպես իրավական կարգավորման ներքո են առնում տերերի և ծառաների մեջ ստեղծված փոխհարաբերությունները, որոշում ծառաների իրավունքներն ու պարտավորությունները։

Ասորա-հռոմեական Դատաստանագրքի ԺԴ, ՃԺԲ, ՁԱ կանոններում սահմանված է հետևյալը. «Թէ որ տայ մարդոյ դեաւղ կամ ստացուած... կամ տուն կամ ծառայ, և տայ նմա թուղթ հաստատութեան, իշխանութիւն ունի այնուհետև տիրել նմին, որով պատուեցաւ և ստանայ, և սեփականեալ վայելէ...»[34]։

---

31 «Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանելի հուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ» էջմիածին, 1865, էջ 94։

32 Նույն տեղում, էջ 92—93։

33 Նույն տեղում, էջ 105։

34 «Ասորա-հռոմեական Դատաստանագիրք», էջ 45։

Որ տերերն իշխանություն ունեին ծառա-աղախինների, սրանց ժառանգների անձի նկատմամբ, այդ ապացուցում են նույն Դատաստանագրքի ԺԲ, ԺԼ, ԼԵ, ԼԷ, ԼԶ և մյուս կանոնները։

Այս կանոններով օրենսդիրն իրավունք է վերապահել կրկին ետ ստանալ նույնիսկ ազատագրված ծառաներին, բռնադրավել նրանց գույքը։ «Եթէ որ,— ասված է ԺԲ կանոնում,—ազատէ զծառայս, կարող է դարձեալ առնուլ յետս...»[35] պայմանով, եթե վկաների ներկայությամբ ապացուցի, որ նա իր նախկին և իր կողմից ազատագրված ծառան է։

Տերը, սահմանված է ԺԸ կանոնում, պարտավոր է ազատագրելիս իր ծառային հանձնել նրա «զստացուածս և զինչս....», բայց եթե ազատագրողը ազատագրման կտակում չի հիշատակում, որ նա ծառաներին ազատագրել է նրանց գույքի հետ միասին, ապա տերերի մահից հետո նրա ժառանգներն իրավունք ունեն՝ «առնուն զամենայն ինչս ազատ ծառային՝ ժառանգիչք ազատողին»[36]։

Ծառա-աղախինների վաճառքի և առքի ժամանակ, ասված է ԼԵ և ԼԶ կանոններում, վաճառողի և գնողի միջև պետք է կնքվի հատուկ պայմանագիր, ուր պետք է հիշատակվի, որ վաճառված ծառան, «ոչ է փախչող», «բարեմիտ» է ու «անարատ»։ Վաճառողը գնողին պարտավոր է «տալ համբերութիւն զամիս վեց առ ի փորձել զնա...»։ Բայց եթե գնող տերը այդ ժամանակամիջոցում ծառայի մոտ հայտնաբերում է որևէ «արատ» կամ ծառան լքում է նոր տիրոջը, ապա գնողն իրավունք ունի՝ «խնդրել և դտանել և տալ յառաջին տէրն և ապա առնու զդին իւր»[37]։

Չնայած դատաստանագրքի հեղինակն իրավունք է տալիս ծառայությունից ազատագրել ծառաներին, բայց սահմանում է մի շարք արդելակող հանգամանքներ։ Նախ, տերերին իրավունք է վերապահվում ազատագրել ոչ բոլոր ծառաներին։ Այնուհետև, ծառայությունից չեն ազատագրվում նրանց երեխաները։ «Եթէ որ առնէ կտակ,—սահմանված է ԺԶ կանոնում,— եթէ առողջ եւ եթէ հիւանդ, եւ կամի ազատել զծառայս իւր, թէ մի և թէ երկուս, կարող է ազատել· եւ թէ Դ են, զերկուսն պարտի ազատել եւ ի հնգէն ցտասն՝ զկէսն պարտի թողուլ եւ ի տասէն ցերեսունն՝ զմին յերիցն թողուլ եւ յերեսունէն ցհարիւրն՝ զմին ի չորից կարող է թողուլ... Իսկ եթէ որ առնէ կտակ և գրէ ազատ զամենայն ծառայս իւր, մնան ամենեքեան ծառայ ժառանգացն»[38]։ Բայց եթե ազատագրված ծառան իրեն հոժար կամքով ցանկություն է հայտնում «մնայ ընդ իշխանութեամբ տեառն իւրոյ անձնիշխան» և ամուսնանում է տիրոջ աղախիններից մեկի հետ, ապա սրանցից ծնված որդիները՝ «ժառանգ լիցին նմա, որ ազատեցն զնա»[39]։

Նույնիսկ ազատների դասին պատկանած անձը, եթե ամուսնանում է ծառաների կամ աղախինների հետ և ընակություն է հաստատում «ի տունն տեառն նորա», ապա տերը իրավունք ունի նրան դասել «յաղախնութեան», «ծառայութեան»։

35 «Ասորա-հռոմեական Դատաստանագիրք», էջ 13։
36 Նույն տեղում, էջ 12։
37 Նույն տեղում, էջ 16—17։
38 Նույն տեղում, էջ 12։
39 Նույն տեղում, էջ 17։

Բայց եթե աղատների գասին պատկանած մարդիկ հրաժարվում էին մտնել «յաղախնութեան» կամ «ծառայութեան» կամ չէին ցանկանում «դրել զանձն իւրեանց ի ծառայութեան», ապա նրանցից ծնված երեխաները մնում էին տիրոջ մոտ որպես ծառաներ. «Կին, որ ամուսնանայ առն ծառայի, եւ բնակի ի տուն տեառն նորա, աղախին լինի ինքն եւ որք ծնանին ի տան տեառն։ Իսկ եթէ ոչ կամի դրել զանձն իւր ծառայութեան, ելանէ ինքն և մնան որդիքն ի ծառայութեան»[40]։ Եթե որևէ ծառա «սիրէ զկին ոք, որ աղատ է, եւ ընդունի զկինն ի յարկս տեառն իւրոյ... իշխանութիւն ունի տէրն յօրինացս քաշել զկինն յաղախնութիւն իւր»[41]։

Դավիթ Ալավկա որդին իրավունք է վերապահել տերերին որոնել, հետ բերել և նույնիսկ սպանել «հանցապարտ» ծառաներին. «Այլ թէ յանցաւորութեամբ լինի ծառայ փախուցեալ ի տեառնէ... և տէր նորա հետամուտ եղեալ մինչ գտանիցէ՝ սպանիցէ, թագուցանել պարտ է և բազում հնարիւք ջանալ մինչև զերծցի...»[42]։

Մ. Գոշն իր «Յաղագս դատաստանաց ծառայից և աղախնաց սպանելոց ի տէրանց» և «Յաղագս դատաստանաց ծառայից և աղախնաց հարուածոց ի տերանց» կանոններում գտնում է, որ ծառա-աղախիններին խոշտանգող, խեղանդամ դարձնող կամ թե սպանող տերերը դատական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն այն դեպքում, եթե ծառա-աղախինները մահանում են հարված ստանալու օրը։ Բայց տերերը ազատվում են դատական պատասխանատվությունից, նույնիսկ տուգանքներից, եթե ծառաները մահանում են մեկ կամ երկու օր հետո, եթե տերերն ապացուցում են, որ մահացած ծառան հանցապարտ էր կամ «յապստամբութիւն» հրահրող։

«Եթէ ոք հարկանէ զծառայ իւր կամ զաղախին իւր գաւազանաւ եւ մեռցի ի ձեռանէ նորա, դատաստանաւ վրէժխնդրութիւն լիցի ի աւերանց...։ Բայց եթե մի օր կամ՝ երկուս կեցցե, մի խնդրիցի վրէժն, զի դինք արծաթոյ իւրոյ են»[43]։ Եթե տերերի հարվածների հետևանքով կուրանում կամ ատամներից զրկվում են ծառաները, ապա տերերը պարտավոր են ազատագրել ծառա-աղախիններին «փոխանակ ական նոցա... փոխանակ ատաման նոցա...»[44]։

Նույնպիսի կանոններ գտնում ենք «Համառօտ մեկնութիւն զրոցն արարածոց, հաւաքեալ ի մեկնութիւնէ Վարդանայ վարդապետի առն հոգելի և իմաստնոյ, աշխատութեամբ Գրիգորի Վարդապետի» աշխատության մեջ։ Եթե որևէ մեկը, ասված է ԼԱ կանոնում. «Հարկանէ զծառայ իւր կամ զաղախին իւր և մեռանիցէ», նա պարտավոր է վճարել միայն սպանվածի «զգին արեան», բայց եթե հարված ստացած ծառա-աղախինը մահանում է մեկ կամ երկու օր հետո, ապա «մի խնդրեսցի վրէժ ատեանէ զի դինք արծաթոյ իւրոյ են»։ Այս աշխատության ԼԳ կանոնում ասված է, որ տերերը կարող են ազատագրել միայն հիվանդ, կույր և խեղանդամ դարձած ծառա-աղախիններին։ «Եթէ,—ասված է այդ կանոնում,—հարկանէ ոք զակն ծառայի իւրոյ և կուրասցուցէ զնա, ազա-

40 «Ասորա-հռոմէական Դատաստանագիրք», էջ 33։
41 Նույն տեղում։
42 Մատենադարան, ձեռ. № 5607, էջ 207ա։
43 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 340—341։
44 Նույն տեղում, էջ 343։

տեսցէ զնա փոխանակ աչաց նորա։ Եթե այլ անդամաւր խեղիցէ զնա, այսպէս ազատէ զնա»[45]։

Ծառա-ստրուկների արտադրական աշխատանքի բնույթի մասին մենք շատ վկայություններ չունենք։ Դատելով մեր օրենսդիրների կանոններից և Գր. Տաթևացու մի շարք վկայություններից, կարելի է հաստատապես ասել, որ ծառա-ստրուկների մի մասն աշխատում էր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների կալվածներում։ Դավիթ Այավկա որդին, Մ. Գոշը և Սմբատ Գունդստաբլն իրավունք են վերապահել տերերին ծառաների մի մասին կարգել «ի գործ մշակութեան... եւ կէսք յայգեգործութիւն, եւ այլք ի զինուորութիւն, եւ դարձեալ այլք ի յայլ գործ որ ի պէտս հասարակաց մերոց կենացս օրինօք պատրաստեալ է»։ Գործի վայրում եթե «եկեսցի որոգայթ մահու, անպարտ են տեարքն նորա...»[46]։

Գր. Տաթևացին ամեն կերպ ջանում է որոշել ծառա-աղախինների իրավունքները, պարտավորությունները, նրանց և տերերի փոխհարաբերությունները։ Ծառա-աղախինները, ասում է հեղինակը, պարտավոր են խնամել տերերի հոտերը, աշխատել նրանց տանը, մշակել նրանց կալվածները, անթերի ծառայել տերերին, պաշտպանել նրանց անձը, ընտանիքը, կայքը։ Նրանք ոչ միայն «անթերի», «անտրտունջ» պետք է ծառայեն տերերին, այլև չպետք է վատնեն, փչացնեն, զոռանան տերերի գույքը։ Եթե ծառան,—գրում է Տաթևացին,— «ոչ է հաւատարիմ տէրն իւրոյ», այլ «կորուցանող է եւ զող», ապա տէրն իրավունք ունի ոչ միայն պատժել, այլև սպանել իր ծառային։ Եթե ծառան «խոովարար է», «խոովասէր», ապա տերն իրավունք ունի կտրել նրա ձախ ոտքն և աջ ձեռքը[47]։

Ընդունելով ծառա-աղախինների ստորադաս վիճակը, այնուամենայնիվ պետք է ընդգծենք, որ միջնադարյան Հայաստանում նկատելի չափով նվազում է ծառա-աղախինների արտադրական աշխատանքի դերն ու նշանակությունը։ Հոգատեր ֆեոդալները, ֆեոդալականացած վանքերն ու եկեղեցիներն իրենց ընդարձակ կալվածները մշակում են ոչ այնքան ծառաների, որքան հողին ամրացված շինականների և վարձկանների համեմատաբար ավելի բարձր արտադրողական աշխատանքը շահագործելու միջոցով։ Դատելով մի շարք վկայություններից, կարելի է ապացուցած համարել այն դրույթը, որ միջնադարյան ծառա-աղախինները իրենց տնտեսական կացությամբ զրված էին համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններում, քան հին աշխարհի ստրուկները։

Միջնադարյան ծառա-ստրուկներն ունեցել են գույքային սեփականություն ձեռք բերելու, այն ժառանգելու, վաճառելու, ծառայությունից ազատվելու, հոգևորական կոչումներ ստանալու և քաղաքացիական որոշ այլ իրավունքներ։

Պահպանվել են մի շարք վկայություններ այն մասին, որ ծառա-ստրուկները ունեցել են գույքային սեփականության իրավունք։ Այսպես օրինակ, Գր. Տաթևացին վկայում է, որ տերերն իրավունք են ունեցել բռնագրավելու միայն «խոովարար», «խոովասէր» ծառաների կայքն ու գույքը։ Բռնագրված գույքի

45 Մատենադարան, ձեռ. N 1054, էջ 71բ.

46 Ա. Աբրահամյան, Դավիթ Այավկա որդու կանոնները, Երևան, 1953, էջ 21—22, Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 419—420։

47 Գր. Տաթևացի, Ամառան հատոր, էջ 26. Հմմտ. ձեռ. N 2188, էջ 38ա և բ։

մի մասը մասնահատվել է տիրոջը, իսկ մյուս մասը՝ իշխանին։ Հետևաբար ծառան պետք է ունենար գույք, որպեսզի հանցանքի դեպքում այն բռնագրավվեր։ Ծառա-ստրուկներին իրավունք է վերապահվել «պարոնին գիտենալովն և կամովն» ձեռք բերել շարժական և անշարժ կայք։ «Եթէ ծառայ որ ինչս կամի գնել,—սահմանված է Ասորա-հռոմեական Դատաստանագրքում,— տեառն իւրոյ հրամանաւ իշխան է առնել» կամ «յորժամ որ ծառայ իւր ազատէ, պարտ է զստացուածս և զինչս իւր աղատել ընդ նմին...»[48]։

Ծառաները ոչ միայն իրավունք են ունեցել գնել որոշ կայք, այլև ժառանգել տերերի կարողությունը։

«Եւ թէ գրէ կտակ (տերը—Ս. Հ.), և զիր ծառայն իւր ժառանգ դնէ՝ նա կարաւղ է հայրն զանհնազանդ որդիսն զրկել, և ծառայի տալ ըստ իր կամաց...»[49]։

Այս առումով ավելի ուշագրավ է Ա կանոնը։ Այստեղ ասված է, որ եթե այլազգի մարդը սպանում է քրիստոնյային և դրամ չունի արյան գինը վճարելու համար, ապա պետք է վաճառեն նրան իր տան և կայքի հետ և վճարեն փրկավճար։ «Եւ որ այսօր ուժ չուննայ՝ որ վճարէ՝ նա ծախեն զինքն ու զիր տունն և զինչ ուննայ ու ի գինն տան, զարդ ի կնկնէն ու ի յորդեցն»[50]։

Մեր օրենսդիրների մոտ կան մի շարք կանոններ այն մասին, որ միջնադարյան ծառա-աղախիններն ունեին նաև որոշ քաղաքացիական իրավունքներ և դրանով իսկ տարբերվում էին հին դարերի ստրուկներից։

Մխիթար Գոշը սահմանել է հետևյալ ուշագրավ օրենքը։ Եթե տերերը, ասում է Գոշը, գնել են ծառաներ, ապա ծառաները «ըստ օրինացն վեց ամ» ծառայելուց հետո «յեօթներորդ ամին» կարող են դուրս գալ ծառայությունից կամ նրանք կարող են ազատագրվել ծառայությունից «ըստ գնոյ» իրենց, ծառայելուց հետո։ Եթե ծառան մենակ է ծառայագրվել, կարող է մենակ դուրս գալ, իսկ «եթէ կնաւ հանդերձ մտեալ իցէ, ելցէ և կինն ընդ նմա»։ Ծառայագրված ծառան իրավունք ուներ «փրկանօք» ազատագրել ոչ միայն կնոջը, այլև որդիներին։ Ծառան նույնիսկ իրավունք է ունեցել փրկավճարով ազատագրել տիրոջ տանը ծնված երեխաներին և տիրոջ կողմից իրեն տրված կին-աղախնուն։ «Ապա թէ տէր իւր տացէ նմա կին եւ ծնանիցի նմա որդիս եւ դստերս, կինն եւ որդիքն տեառնն նորա եղիցին, եւ նա միայն ելցէ. փրկանօք ելցեն եւ նոքա»[51]։

Այս կանոնն ուշագրավ է մի շարք առումներով։ Այստեղ ծառան իր սոցիալական դրությամբ տարբերվում է ստրուկից։ Նա ոչ թե հարկադրաբար, այլ կամովին կարող էր ծառայագրվել որպես «յաւիտեան ծառայ»։ Օրենսդիրների մոտ կան ավելի կարևոր հատվածներ այն մասին, որ միջնադարյան ծառան իր իրավական դրությամբ տարբերվում էր ստրուկից և դրված էր ավելի բարենպաստ պայմաններում։

Եթե որևէ մեկը, սահմանել է Գոշը, նյութական խիստ կարիքից դրդված իր դստերը վաճառում է «յադախնութեան», ապա գնողն իրավունք չունի նրան կրկին վաճառել։ Վաճառված աղախինն աղախնությունից կարող է ազատվել,

48 «Ասորա-հռոմեական Դատաստանագիրք», կանոն ԻԷ և ԺԸ։
49 Смбат Спарапет, Судебник, էջ 109.
50 Նույն տեղում, էջ 19։
51 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 335։

երբ նրա հայրը կամ հարազատները վճարում են նրա փրկավճարը կամ երբ նա ըստ իր «չափով գնոյ» ծառայում է տիրոջը[52]։

Այս նույն կանոնները որոշ փոփոխություններով առկա են Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում. «Եւ թէ որ քրիստոնէ ծառայ դնէ յանաւրինաց՝ նա ծառայէ զգնաւղն է տարի. և ապա կարէ բաժանիլ յիրմէ, եւ վճարէ զիր գինն։ Եթէ կնկովն լինի մտել՝ նա կնկովն ելնէ եւ որդովք. եւ թէ ինքն՝ մէջ»[53]։

Մեր օրենսդիրներն իրենց կանոններում պատվիրում են պաշտպանել, թաքցնել տերերին լքած ծառաներին։ «Մի մատնեսցես զծառայ տեառն իւրում որ յաւելուցու ի քեզ ի տեառնէ իւրմէ,—ասում է Գոշը,— և ընդ քեզ բնակիցէ եւ ընդ քեզ զետեղեսցի յամենայն տեղւոջ ուր եւ հաճոյ իցէ նմա, եւ մի նեղիցէք զնա...»[54]։

Օրենսդիրները հատուկ կանոններով դատական պատասխանատվություն են սահմանել այն տերերի նկատմամբ, որոնք սպանում կամ պատժում են ոչ միայն քրիստոնյա, այլև օտարազգի ծառաներին։ Օտարազգի ծառաները նույնպես կարող են ազատագրվել ծառայությունից 7 տարի կամ «ըստ գնոյ չափով» ծառայելուց հետո։

Ծառաները կարող էին ազատագրվել ծառայությունից նաև հոգևորականի կոչում ստանալուց հետո։ Ճիշտ է, նրանք կարող էին կարգվել հոգևորականներ, քահանաներ, եկեղեցիների սպասավորներ միայն տերերի նախնական համաձայնությունը ստանալուց հետո։ Բայց այս փաստը նույնպես հաստատում է այն դրույթը, որ ծառաներն օգտվում էին քաղաքացիական որոշ իրավունքներից։

«Զծառայս,—սահմանել է Գոշը,— ի ժառանգաւորութիւն ածել առանց կամաց տերանցն ոչ հրամայեմք...։ Ապա թէ երբէք արժանի երեւեսցի ծառայն առ ի ձեռնադրութիւն աստիճանի... և թողացուսցեն տեարք իւր եւ ազատեսցեն եւ ի տանեն ի բաց առաքեսցեն, եղիցին»[55]։

Օրենսդիրը պահանջում է անհապաղ ծառայությունից և աղախնությունից ազատագրել այն բոլոր ծառա-աղախիններին, որոնք անթերի և «ըստ գնոյ չափով» ծառայել են տերերի մոտ։ Նա խիստ մեղադրում է բոլոր նրանց, ովքեր խախտում են այդ օրենքները, ովքեր ծառաներին ու աղախիններին չեն ազատագրում նույնիսկ 7 տարի ծառայելուց հետո էլ։ Գոշն այս կարգի ծառաներին իրավունք է վերապահում թողնել իրենց տերերին, փախչել «այլուր հաճոյ իցէ» և պատվիրում է ծառաներին ապաստան տվող մարդկանց նրանց «վայրապար» չհանձնել «ի ձեռս» հին տերերին[56]։

Արդ, ընդունելով ծառա-աղախին-ստրուկների առկայությունը միջնադարյան Հայաստանում, որոշելով նրանց իրավունքներն ու պարտավորությունները, ավելորդ չենք համարում կատարել մի շարք ընդհանուր եզրակացություններ։

1. Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, ծառա-աղախին-ստրկության առաջացման աղբյուրներն էին պատերազմները,

52 Մ. Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 336։
53 Смбат Спарапет, Судебник, էջ 132։
54 Մ. Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 391։
55 Մ. Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 333. հմմտ. Ս մ բ ա տ Գ ո ւ ն դ ս տ ա բ լ, Դատաստանագիրք, կանոն ԺԸ։
56 Նույն տեղում, էջ 391։

գերեվարությունը, մարդկանց առքն ու վաճառքը, ծառաների «պտուղը», նյութական խիստ կարիքը։

2. Միջնադարյան ծառա-աղախին-սպասավորները իրենց վիճակով քիչ էին տարբերվում հին դարերի ստրուկներից։ Նրանք, ինչպես ստրուկները, առանց տերերի համաձայնության չէին կարող դուրս գալ ծառայությունից։ Ավելին, տերերի իրավունքը տարածվում էր ոչ միայն ծառաների, այլև նրանց ընտանիքի անդամների վրա։ Զանազան եղանակով ձեռք բերված ծառաներին նրանք կարող էին վաճառել, նվիրել, կտակել, աղատադրել և ետ դնել։

3. Քանի որ հայկական ֆեոդալական հիերարխիան խարսխված էր շինական դյուղացու աշխատանքի և ստեղծած արդյունքների շահագործման վրա, հետևաբար ծառա-աղախին-ստրուկների աշխատանքը մնաց մեզ մոտ անմիջական սպառողական բարիքների արտադրության ստադիայում միայն։ Միջնադարյան ծառա-աղախին-ստրուկները աշխատում էին որպես նաժիշտներ, դայակներ, կառապաններ, մառանապետներ, մատուվակներ, պարտիզպաններ, վերակացուներ, դործակալներ։ Կային նաև արհեստավոր-ծառաներ, դարբիններ, հյուսներ, ջուլհակներ, կոշկակարներ և այլն։ Ծառա-աղախինների մի մասն էլ աշխատում էր հողատեր-ֆեոդալների կալվածներում, խնամում նրա անասունները։

4. Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով պատմական սկզբնաղբյուրների էջերից անհետանում են հին դարերից եկած «ի ստրկաց կարգի ծառայութիւն», «ծառայութիւն ստրկութեան» բառերը և սրանց փոխարինելու են գալիս «սպասավորութիւն», «աղախնութիւն», և ընդհանրապես «ծառայութիւն» բառերը։ Այս պատմաշրջանում մեծ չափերով աճում է կախյալ և ճորտացված գյուղացիների թիվը և անհամեմատ նվազում ծառա-ստրուկների թիվը։

5. Միջնադարյան Հայաստանի ծառա-աղախիններն արդեն իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ, քաղաքացիական իրավունքներով նկատելիորեն տարբերվում են հին դարերի ստրուկներից։ Ս՛եր օրենսդիրները ծառաներին իրավունք են վերապահել ծառայության սահմանված ժամկետները լրանալուց, «ըստ դնոյ իւրոյ» ծառայելուց, կամ սահմանված փրկավճարը մարելուց հետո ոչ միայն անձամբ, այլև ընտանիքով դուրս գալ ծառայությունից. ծառաներն ունեցել են ոչ միայն գույքային սեփականության իրավունք, այլև դույքը և կայքը իրենց հետնորդներին ժառանգելու իրավունք։

6. Անտարակուսելի է, որ միջնադարյան Հայաստանում ծառա-աղախինների ճնշող մեծամասնությունն արտադրամիջոցները, հողակտորները, անձնական իրավունքները կորցրած այն անձնավորություններն էին, որոնք արտադրության մեջ իրենց դրված տեղով, իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ և քաղաքացիական իրավունքներով տարբերվում էին և՛ հին դարերի ստրուկներից, և՛ միջնադարյան գյուղացիներից։

Նրանք ստրուկներից տարբերվում էին նրանով, որ ունեին գույքային սեփականատիրական որոշ իրավունք և կարող էին դուրս գալ ծառայությունից։ Այս է հիմնական պատճառը, որ և Մ. Դոշը և Սմբատ Գունդստաբլը ծառայության դրությունը երբեք չեն համարում «հավիտենական», «մշտնջենական» երևույթ։ Նրանք շինական-դյուղացիներից տարբերվում էին նրանով, որ երկրի էկոնոմիկայում, արտադրության ասպարեզում խաղում էին երկրորդական դեր և սպասարկում էին տերերի միայն սպառողական կարիքները։

ЦАРРАИИ — АЛАХИНЫ — РАБЫ И ИХ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Проф. С. Е. АКОПЯН

(Резюме)

В средневековой Армении рабы, или подневольные люди, были известны под названием *царрай, алахин, спасавор*. Основными источниками рабства были войны и торговля невольниками. В рабов превращались и неимущие люди, подпавшие под долги. Ряды рабов пополнялись также из «доморожденных» — людей, родившихся от брака царей и алахин или от сожительства рабов и свободных.

Несмотря на наличие ряда категорий рабов, или подневольных людей, рабство здесь носило главным образом патриархальный, домашний характер. Рабский труд не играл большой роли в производстве, а имел подсобное значение в феодальном хозяйстве. Главное место в производстве принадлежало свободному труду крестьянина—общинника-шинакана. В результате развития феодальных отношений сравнительно быстро увеличивается количество зависимых категорий населения и уменьшается количество царраев — рабов. Царраями, алахинами, спасаворами становились люди, потерявшие свои земельные участки и средства производства. Своим социально-экономическим положением они отличались от античных рбов и средневековых крестьян. От первых они отличались тем, что уже имели некоторые гражданские права, частную собственность (с правом передачи по наследству) и могли освобождаться от подневольного положения путем выкупа или отработав определенный срок (7 лет) у хозяина; от крестьян-шинаканов они отличались тем, что в экономике страны играли незначительную роль и главным образом несли службу в качестве дворовых.